

ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ ԿԸ ՔԱՂԵՄ

Ճառագայթներ կը քաղեմ ծաղիկներէն դաշտերուն,
Եւ աչքերէն՝ որ ինծի միշտ ժպտելով կը նային,
Ճառագայթներ կը քաղեմ ես աստղերէն պըսպըղուն,
Ամէն զիշեր՝ երբոր վիշտը քարանայ իմ սրտին:

Կը թառամի վարդն հողոյս ամէն օր միշտ աւելի,
Եւ աղբիւրը վըճիտ երազներուս մանկութեան
Կը ցամքի, ա՛հ, կը ցամքի մահուան տապով ահռելի,
Ու կը սոսկամ ես ինծմէ, կ'ուզեմ ապրիլ անպայման:

Արշալոյսներ կ'ողջունեմ առանց վարդեր քաղելու,
Ու արեւներ ես կ'ըմպեմ, բայց ջերմութեան եմ կարօտ,
Հակասութիւն ահաւոր՝ որ չունի բառ, ոչ լեզու,
Եւ հրդեհի մը նման զիս կը լափէ յաջադիւտ:

Կը փոթորկի հորիզոնս յուզումներով պայքարի,
Ու խաւարին մէջ հսկայ՝ ես անխաղտեր կը քալեմ,
Լոյսի ճամբան կը փնտռեմ եւ երկնային հոսանքի,
Եւ ուղիքս վրայ ծաղկած վարդե՛ր, վարդե՛ր ժպտաղէմ:

Ես ճառագայթ եմ փոքրիկ, լոյսի փշրանք մարմնաւոր,
Ճառագայթի նման ալ կ'ուզեմ անցնիլ սահմանէն,
Դէպի չքնաղ ոլորտներն անհունութեան թեւաւոր,
Ուր կը ցանկամ ես ըմպել կեանքը վըճիտ ակերէն:

ՍԱԻԱՌՆԱԿԻՆ ՄԷՁ

Բարձրութեան վրայ հոսանում,
Ամպերէն վեր կը սաւառնիմ ես ահա,
Օ՛ր ամպերու դաշտն հունաւոր եւ անհուն,
Ձիւնէ վերմակ մետաքսեայ,
Որ թանձրութիւնը կը ծածկեն մայրօրէն
Վարն արցունքի հովիտին,
Որուն վերեւ կու լայ անձրեւ տրոմալար:
Անդո՛րը, անչեղ ուղիով
Կը սուրայ նաւն օդաչու
Եւ վիհն յստակ ծովերուն
Որ լայնատարր փռուած են հոն ըստօրեւ,
Իրենց գաղտնիքը կը բանան աչքերուն,
Որ արծիւի բերքերուն պէս խորատես,
Հակած է ալժմ անոնց վրայ:

Արեւուն մէջ եմ, արեւո՛ւն պէս պայծառ
Հողիս կ'առնէ հսկայ քայլեր հսկայի,
Ճառագայթի պէս ուղիղ,
Եւ վաղըն պէս արագասոյր նետերու:
Կանաչ մարդերը ժըպտուն
Ու թարմ կողեր բլրակներու դալարում,
Ու գաղաթներ ձիւնածաղիկ լեռներուն,
Եւ սատափեայ երեսով
Չքնաղ լիճեր երազիւտ,
Ու նրբազիծ ճամբաներ
Որ կը զրկեն մէջքը տրտում տուններուն,
Եւ պալատներ, խրճիթներու հաւասար,
Բոլորն ալ, ո՛հ, եղբայրացած իրարու,
Վարէն ինծի նախանձելով կը նային:

Օ՛ր, կը սիրեմ ես զըրաւուիլ ու խոկալ,
Դառնալ զերին կամաւոր սուրբ Երազին,
Ըմպելով միշտ թովքը չքնաղ կապոյտին,
Ուր խորամուխ կը բարձրանամ տարփազին՝
Անամպ, յստակ խորութեան մէջ երկնքի,
Հոն՝ ուր կ'ապրի մեր հողին,
Անհունին աչք թափանցիկ,
Եւ գաղափարն անմարմին
Յաւերժական տենչերուն:
Ի՛նչքան թեթեւ, ի՛նչքան զըւարթ է հոս կեանքն,
Ազատ նիւթի կապանքէն
Եւ ցաւերու շղթաներէն ծանրակիր,
Յար ձկտելով ալիքներուն հըպելու
Ամբաւութեան ուկեանին:

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ

Երազին ափն ոսկեղնիկ
Ես գոց աչքով կը տեսնեմ,
Վարդենիներ արեգդէմ
Ու թռչուններ խառուտիկ,
Որ աստղերուն հետ կ'երդեն
Երջանկութիւնն անառիկ:

Ու կը գաղթեն հրճուազին,
Երամ երամ հողիներ,
Լոյս ուղիով անվահեր
Դէպի սահմանն անուրջին,

Ուր կապոյտին սուրբ լիճեր,
Անսուգ անամպ կը ժպտին:

Պարտէզներէն կը յորդի՛
Անմահութեան բոյրն յատակ,
Սիւքը կ'անցնի զերգ տատրակ՝
Ճակատներուն փարելի
Տալու համբոյր շարունակ
Շունչով չքնաղ զարունի:

ՅՈՅՍԻ ԹԻԹԵՌՆԵՐ

Ափերուս վրայ եկան հանգչիլ թիթեռներ,
Ծընած Յոյսի արեւէն.
Պահ մը եկան լուսաւորել հորիզոնն՝
Ճառագայթով նրկարէն:

Սահմաններէն դալարագեղ երազին
Այգը կարմիր բացուելուն՝
Դարձեալ եկան զըզուելու աչքըս յոգնած՝
Տառապանքէն ստուերներուն:

Միջօրէին՝ երբոր ճակատս քերթողի՝
Պանծած էր հուր շանթերով
Պոկումներուս՝ առի համբոյր կաղզուրիչ
Անոնց մեղմիկ հըպումով:

Վերջալոյսին՝ խալտարըդէտ դոյներով
Երբ ամէն ինչ կը ժպտէր,
Եկան անոնք փայփայելու իմ հողին՝
Կրքի հովէն տարուեր:

Եկա՛ն, եկա՛ն ե՛ւ զիշերներ ե՛ւ առտու,
Բաշխելու դոյն ու կշռոյթ.
Եւ սատափեայ երկինքներով մեղրակաթ,
Լուսնէն եկան անծածկոյթ:

Ու երազիս կանանչադարդ եղերքին,
Վըրան դարկին համարձակ,
Եւ ուխտեցին ապրիլ յաւէտ ինծի հետ,
Թիթեռներն՝ Յոյս անուշակ:

1960

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ՔԵՁԻ ՀՅՏ

ԱՐՁԱԳԱՆԳ ՄԱՄԼՈՅ

Ի՞նչ է ձգեր ենք ձայներնիս,
Եղբարք ի Քրիստոս.
Ի՞նչ է այս աղմուկը, հրմշտուկն ու ողբուկոծը. —
Գրական գրականութիւն, գրականաշունչ, շշունջ.
Ի՞նչ են այս բոլորը. — խորքով աղգային, ձեւով միջաղգային, եւն.
Ո՞ր չաստուածը իջեր է մեր մէջքին,
Ու կը խարանէ մեր կոնակը.
Ոչ գիրն է մեռած եւ ոչ գրիչը.
Հայը կ'երկնէ հոս, հոն, աչքի-քթի տակ.
Բոլոր մարմիննիս ժայթք է, հուր.
Բոլոր հողինիս վէրք է, բերք ու երգ:

Հայ ենք. ճիշտ ասոր համար,
Ոչ հատնելիք ունինք եւ ոչ մեռնելիք.
Ա՛ս էր պակաս.
Գրական դարոց, գրական սերունդ, գրական այսինչ այնինչ,
Ի՞նչ են այս դժուար սահմանումները, բառերը.
Ըսելիք ունի՞նք՝ ըսենք. չունի՞նք՝ լռենք.
Եղաւ վերջացաւ.
Եթէ ունինք՝ երկինքը պիտի քալէ մեղի հետ.
Եթէ չունինք՝ խմենք սուրճերնիս, նստինք.
Ո՞ր դարը մեզ մեռցուց, ըսէք տեսնեմ.
Ո՞ր թուրը լռեցուց մեր ձայնը, ըսէք՝ չտեսնեմ:

Աւելորդ են այս իրարանցումն ու ահազանդը.
Այսօր, երէկուան պէս, անցեալին,
Ունինք դրոշներ, ներշնչեալ, աղատ,
Գէթ թղթատե՛նք դանոնք.
Այսօր, ի Պէյրուս, ի Փարիզ, յԱմերիկա, յԻսթանպուլ,
Այսօր, ի Հայաստան,
Միտքն Հայուն կ'եռայ, կ'երկնէ, եւ ի՞նչ բերք.
Ոմանք փոխած են իրենց գրական սե՞ռը,
Թող փոխեն. ի՞նչ կայ ասոր մէջ. տարիքնին ալ փոխեցին, աւա՛ղ.
Ո՞վ ըսած է որ դուն, ան, միւսը,
Ո՞վ ըսած է որ դուն, միշտ հէքեաթ, միշտ քերթուած:
Գրելու էք միշտ վէպ, միշտ հէքեաթ, միշտ քերթուած: